ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ *(«Հայկական կոտորածները Ախալքալաքի գավառում 1918 և 1921թթ.»).*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Զբաղվում է Արևմտյան Հայաստանի, Ջավախքի, հայ-վրացական հարաբերությունների պատմության հարցերով:

Հեղինակ է երկոք մենագրության («Էրզրում» (Եր.,1994), «Հայոց պատմություն» (Եր., 1998), «Ջավախք. պատմության ուրվագիծ» (Եր., 1999) և այլն), ավելի քան երեսուն գիտական հոդվածների: Խնդրո առարկա թեմաների շուրջ զեկուցումներով հանդես է եկել հանրապետության և միջազգային մի շարք գիտաժողովներում:

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ *(«Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը 1920-1923թթ.»).*

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական քարտուղար:

Ուսումնասիրության շրջանակներում են հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության մի շարք խնդիրներ՝ հայկական հարցը, հայ-ռուսական հարաբերությունները, Հայաստանին առնչվող խորհրդաթուրքական հարաբերությունները և այլն:

Հեղինակ է «Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը 1920-1922թթ.» աշխատության, գիտական մի շարք հոդվածների, այդ թվում՝ «Հայաստանը խորհրդաքեմալական հարաբերությունների ոլորտում 1920թ.», «Հայկական հարցը սառը պատերազմի սկզբնական շրջանում» և այլն: Զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ *(«Մոսկի հայկական կառավարությունը (1915թ. մայիսի 15 - հունիսի 15)»).*

Պատմագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Հետազոտությունների ոլորտը ներառնում է 1914-1920թթ. հայոց պատմության հիմնահարցերը: Մենագրության («Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, մարտ-հոկտեմբեր 1917թ.» (Եր. 1997), փաստաթղթերի ժողովածուների («Հայաստանի հանրապետությունը 1918-1920թթ.» (Եր. 2000) և այլն) և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է:

ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ *(«Չերքեզական ջոկատների մասնակցությունը 1915թ. հայերի ջնջմանությանը»).*

ՀՀ ԱԳՆ Թուրքիայի բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ:

Զբաղվում է նոր շրջանի Թուրքիայի պատմությամբ, հայ-թուրքական հարաբերություններով:

Գիտական աշխատությունները հրատարակվել են Հայաստանում, Ռուսաստանում, Թուրքիայում: Հեղինակ է երեք մենագրության՝ ("Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX - первая четверть XX вв.)" Ереван 2001г.; "Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений" Ереван 1999г.; "Генезис кавказского фактора" Москва 1998г.):

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ *("Россия и организация управления Западной Арменией. 1915-1917").*

Պատմական գիտությունների դոկտոր, քաղաքագիտության պրոֆեսոր, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ՍՔ և ԸՏ դեպարտամենտի վարիչ:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հիմնականում 19-20-րդ դդ. սկզբին Հայաստանում և Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականության (տնտեսություն, եկեղեցի, վարչական կառավարում, Հայկական հարց) խնդիրները:

Հեղինակն է «Հայաստանը և Ռուսաստանը 1878-1897թթ.» (Եր., 1997), «Ռուսաստանը և հայկական հարցը» (Եր., 1998), «Ղարաբաղի բախումը» (Եր., 1999), «Հայկական հարցը ռուսական մամուլում 1900-1917թթ.» (Եր., 2000), «Հայոց եկեղեցու "Պոլսևնիան"» (Եր., 2001) աշխատությունների, բազմաթիվ գիտական հրապարակումների:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *(«Եղեռնը և Համաձայնության երկրների դիրքորոշումը 1915-1916 թթ.»).*

Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող, «Գլաձոր» կառավարման համալսարանի դոցենտ:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության, Հայկական հարցի վերաբերյալ Մեծ տերությունների քաղաքականության հիմնահարցերը: Հեղինակն է «Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917թթ.» աշխատության և այդ թեմայով ավելի քան մեկ տասնյակ գիտական հոդվածների: Նշված խնդիրների շուրջ զեկուցումներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային մի շարք գիտաժողովներում:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ *(«Հայոց 1915-1916թթ. ցեղասպանության պատմագրության ակունքներում»).*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ:

Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման, հասարակական-քաղաքական մտքի, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հիմնահարցերի լուսաբանմանը:

Այդ թեմաներով հեղինակ է բազմաթիվ հոդվածների և գիտական աշխատությունների, մասնավորապես՝ «1915-1916թթ. Հայոց ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ» (Երևան, 1998), «19-րդ դարի II կեսի հայ ազգայինազատագրական շարժման պատմագրությունից» (Երևան, 1987), «Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ» (Երևան, 1993) աշխատասիրությունների:

ՏԻԳՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ *(«Հայոց ցեղասպանության լուսաբանումը ԱՄՆ մամուլում (1915-1917 թթ.)»).*

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական ուսումնասիրությունների առարկան՝ հայ ժողովրդի նորագույն պատմության հիմնահարցերը՝ կապված ԱՄՆ-ի քաղաքականության հետ Մեծ եղեռնի տարիներին:

Թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ամերիկայի Միացյալ Նահանգները և ցեղասպանությունը 1915-1917 թթ.»: Զեկուցումներով հանդես է եկել տարբեր հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ *(«Մեծ եղեռնը Ռուսաստանի քաղաքականության մեջ. հայեցակարգեր և իրականություն»).*

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող:

Գիտական հետազոտությունների շրջանակը՝ հայ ժողովրդի նորագույն պատմության, մասնավորապես, Ռուսաստանի քաղաքականությունը Հայկական հարցում և Հայոց ցեղասպանության տարիներին, ինչպես նաև հայ-ռուսական հարաբերություններն արդի փուլում հիմնահարցերը:

Հեղինակն է «Ռուսաստանի Պետական Դումա և Հայոց ցեղասպանությունը 1915-1916թթ.» (Եր., 2001), «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց ցեղասպանության մասին 1915-1916թթ.» (Եր., 2001) աշխատությունների, Հայոց ցեղասպանության հիմնահարցե-

ին առնչվող մի շարք հոդվածների: Զեկուցումներով հանդես է եկել տարբեր հանրապետական և միջազգային գիտաժողովներում:

ՎԵՐԻՆԵ ՄՎԱՋՅԼԱՆ *(«Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների վկայությունները որպես պատմաճանաչողական խնդիրներ»)*.

Բանագետ-ժողովրդագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող:

Գիտական բազմամյա հետազոտությունների առարկան՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ գավառների ավագ, միջին ու կրտսեր սերունդների հայերի հաղորդած բանահյուսական ժառանգությունը, հատկապես՝ Հայոց ցեղասպանության հետևանքով բնագաղթած վերապրող ականատեսների հուշերն ու պատմական բնույթի (հայերեն և թուրքալեզու) երգերն են: Հեղինակ է հայության հավաքական, պատմական հիշողությունը ներկայացնող՝ «Վան-Վասպուրական» (1998), «Մուսա լեռ» (1984), «Մեծ Եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995), «Մեծ Եղեռնը արևմտահայոց հուշապատումներում և թուրքալեզու երգերում» (1997, ռուսերեն՝ 1997, անգլերեն՝ 1999), «Պոլսահայոց բանահյուսություն» (2000), «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» (2000) և այլ աշխատությունների: Հեղինակ է գիտական բազմաթիվ հոդվածների: Բանագիտությանը, ժողովրդագիտությանը և Հայ Դատին առնչվող զեկուցումներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում:

ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ *(«Էրզրումի վիլայեթի որոշ կազաների հայ բնակչության թվաքանակի ճշտումն ըստ Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների 1914-1915թթ. կազմված վիճակագրական ցուցակների»)*.

Դասախոսում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրության, Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հարցերով: Հեղինակ է գիտական մի շարք հոդվածների, զեկուցումներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային մի շարք գիտաժողովներում:

ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ *(«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության որոշխնամ գործունեությունը 1910-1930-ական թթ.»)*.

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Մասնագիտանում է մշակութաբանության և սփյուռքագիտության բնագավառներում:

Հեղինակ է "Проблемы сравнительного метода в историческом знании" (Ер., 1979), "Культура жизнеобеспечения и этнос" (Ер., 1981, в соавт.), «Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիությունը Խորհրդային Հայաստանում, 1923-1937թթ.» (Երևան, 1999) մենագրությունների և այլ աշխատությունների, մի շարք գիտական հոդվածների: